ուազծօրէն գրի առնել իմ ապրումները Երեւանում»: Դրա համար էլ նա կարճ է կապում իր տպաւորութիւնները այդ մասին:

Հաքսահաուզէնի մասին գրած մեր յօդուածը կարդացողը անտարակոյս նկատեց անմիջապէս, թէ նրա աշխատութիւնը որչափ աւելի արժէքաւոր նիւթեր է պարունակում Երեւանի մասին, բաղդատութեամբ Բոդենշտէդտի գրուածքների:

* * *

Այժմ համառօտակի առաջ բերենք եւ այն հատուածները, ուր գերման բանաստեղծ-ճամբորդը խօսում է Էջմիածնի մասին:

Տեսանք, որ նրան եւ իր ուղեկցին այնտեղ առաջնորդողը եղել է Խաչատուր Աբովեան (1844, մարտի վերջերին): Էջմիածնում նրանց ցոյց է տրուել վերին աստիճանի սիրալիր ընդունելութիւն: Դրանից ընդամէնը մի քանի ամիս առաջ Հաֆստհաուզենն մինչեւ իսկ վանքի մատենադարանը ցոյց չէին տուել, պատրուակելով թէ «բանալիները կորել են»:

Աշտարակեցու ներկայութիւնը, ըստ երեւոյթին, բաւական ազդեցութիւն էր ունեցել նաեւ Էջմիածնի ոխընկալ վանականների վրայ: Այդ պարագան Բոդենշտէդտ բացատրում է նրանով եւս, որ իրենք յանձնարարական են ունեցել Երեւանի բերդապետ Քիլից, ինչպէս նաեւ նրանով, որ Աբովեանի առաջնորդութեամբ են այցելած եղել Էջմիածին:

«Էջմիածնում մեզ այնպիսի սիրալիր ընդունելութիւն ցոյց տրուեց,— ասում է Բ. իր «Ցուշեր»ի մէջ,— որ Զատկին այնտեղ անցկացրած մեր օրերը իսկապէս որ բանաստեղծական եղան: Երբ մենք մեր բարձրադիր բնակարանից առաջին անգամ լինելով Արարատ սարը՝ բոլորովին անամպ վիճակում տեսանք, մեզ վրայ մի այնպիսի սրբազան ջերմեռանդութիւն իջաւ, որ Ռոդէն խեղրեց ինձ՝ այդ տրամադրութեան տակ մի քանի տող բան գրել ու իրեն նուիրել ի յիշատակ այդ օրուան»: Եւ Բ. իր «Ցուշեր»ի մէջ առաջ է բերում այն ոտանաւորը, որ գրի էր առել նա այդ րոպէին, ի տես հիասքանչ Մասիսի: Նոյն խորը տպաւորութեան մի ուրիշ արտայայտութիւնն է բանաստեղծի հետեւեալ խօսքը.

«Երբե՛ք եւ ոչ մի տեղ իմ կեանքում ես չեմ զգացել մի այնպիսի վսեմ, հրաշագործ ջերմեռանդութիւն, ինչպէս այն առաւօտը, երբ ես Էջմիածնում առաջին անգամ բարձրագագաթ Արարատը տեսայ,— ամենագեղեցիկ յուշարձանը, որ Աստուած ինքն իր համար կանգնեցրել է այս աշխարհի վրայ: Երկինքը պարզ էր ու վճիտ, ինչպէս անմեղ մանկան աչքերը... Նա ծածկուած էր, ոտից գլուխ, ճերմակ ու մարգարտային սաւանով: Խորհրդաւոր լռութիւն էր իջել դարնանազարդ բնութեան վրայ» («Քրիստ. մուտքը», 29):

«Հազար ու մի օր Արեւելքում» աշխատութեան մէջ եւս (Ա. 165, 168) էջեր է գրաւում այդ այցելութեանը նկարագրութիւնը: Այդտեղից իմանում ենք մենք, որ հեղինակը Ներսէս Ե-ի հետ ծանօթացած է եղել տակաւին Մոսկուայում:

Հետաքրքրական է այն՝ արեւելեան գոյնով երանգաւորուած՝ կենցաղագրական երկարախօսութիւնը, որ տեղի է ունենում Կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոսի ու գերման բանաստեղծի միջեւ, երբ սա իր ուղեկիցների հետ միասին ոտք է դնում վանքից ներս:

— Սրբազա՛ն հայր,— սկսում է բանաստեղծը,— երկնքի թուչունը բոյն ունի, անասունն էլ որջ. միայն մարդ-արարածը չգիտէ, թէ ո՛ւր պիտի դնի իր գլուխը:

Արքեպիսկոպոսը պատասխանում է.—

— Ո՛վ օտարական, ի՞նչ է ասում բանաստեղծը.— Երբ հիւր է գալիս մօտդ, լուա՛ ոտները, դորդեր փռիր նրա առջեւ, որ նստի ու հանգստանայ օջախիդ մօտ: Իմ տունը քոնն է:

Բանաստեղծը.—

— Այո՛, Գերապատիւ հայր, հիւրասիրութիւնը վարդաստան է դարձնում անապատը, մինչ թշնամանքը վարդաստանն էլ անապատի է վերածում:

Արքեպիսկոպոսը սեղմում է հիւրի ձեռքը եւ ասում.

— Օտարակա՛ն, դու քո երիտասարդ տարիքի համեմատութեամբ՝ չա՛տ իմաստուն-իմաստուն բաներ ես խօսում:

— Սուրբ հա՛յր, իմ իմաստութիւնը Քոնից արտացոլումն է միայն. քո խօսքերը ինձ վրայ իջնում են այնպէս քաղցրօրէն, ինչպէս Իսրայէլի որդոց գլխին՝ անապատի մանանան: